ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

Նախաբան.....3

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը.....4

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները 7

Հղումներ 8

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի (այսուհետ՝ Որոշում 1) 12-րդ կետի և արտացոլում է հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշման (այսուհետ՝ Որոշում 2) №1 հավելվածով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանի համապատասխանության գնահատումը հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջներին:

Հանրային կազմակերպության գնումների պլանի մոնիթորինգը ներառում է հանրային կազմակերպությունների կարիքներին համապատասխան ձեռքբերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների քանակի և ժամանակացույցի գնահատումը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) 2018 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված և հանձնաժողով ներկայացված գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում:

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի կառուցվածքը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն՝ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի Որոշում 2-ով սահմանված լրացուցիչ պահանջների, ընկերության պաշտոնական կայքում և ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել է 2018 թվականի համար հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը:

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքում ամփոփվել են հրապարակված տվյալները, համաձայն որոնց ընկերությունը 2018 թվականին պլանավորել է իրականացնել 35 920 մլն դրամի (առանց ԱԱՀ) գնում, որից 29 494 մլն դրամը 2018 թվականին պլանավորված գնումներն են: Ընկերության պլանավորված գնումներում ներառված են նաև նախկինում կնքված, սակայն 2018 թվականին իրականացման ենթակա գործարքներ:

2018 թվականին պլանավորված գործարքների վերաբերյալ հրապարակված տվյալների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնման ընթացա-կարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (առանց ԱԱՀ)	Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)	Գնման գործընթացի մեկնարկի ժամկետները
1	2	3	4	5	6	7
1	Գնումների ընթացակարգերի շարք[1]	11	29%	2 252,4	8%	2018 թ. հունվար -2018 թ. ապրիլ
2	Առաջարկների բաց հարցում	23	60%	25 213,2	85%	2018 թ. ապրիլ - 2018 թ. հունիս
3	ՄԱ -պայմանագրի ժամկետի երկարացում	3	8%	500,0	2%	2018 թ. ապրիլ - 2018 թ. հուլիս
4	Միակ աղբյուր	1	3%	1 528,8	5%	2018 թ. հունիս
	Ընդամենը	**38**	**100%**	**29 494,4**	**100%**	



Նկար 1. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 2. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

[1] *Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին կանոնադրության» 12.8 կետի, տիպային արտադրանքի գնումները, որոնք իրենց յուրահատկության պատճառով չեն կարող միավորվել մեկ լոտում (օրինակ՝ անձնակազմի ուսուցման և որակավորման բարձրացման ծառայությունների գնում) մինչև 50 մլն ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) արժեքով կարող են միավորվել գնման ընթացակարգերի շարքում գործունեության տեսակների կոդերով 1-ից մինչև 15՝ առանց որոշակի եղանակի որոշման (եղանակի ընտրությունը՝ ՄԳՄ հայեցողությամբ): Յուրաքանչյուր գնման անցկացման փաստացի եղանակը արտացոլվում է գնումների տարեկան համալիր ծրագրի կատարման հաշվետվության մեջ:*

Նախկինում կնքված, սակայն 2018 թվականին իրականացման ենթակա գործարքների մոնիթորինգի արդյունքներն ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 2

№	Գնման ընթացակարգեր	Պլանավորված գնումների քանակը (հատ)	Գնումների սկզբնական պլանավորված արժեքը, մլն դրամ (առանց ԱԱՀ)	գնման գործընթացի ավարտի ժամկետները
1	2	3	5	
1	Գնումների ընթացակարգերի շարք[1]	4	525,2	դեկտեմբեր 2018 թ.
2	Առաջարկների բաց հարցում	8	4 827,7	հունվար 2021 թ.
3	ՄԱ -պայմանագրի ժամկետի երկարացում	3	396,4	հոկտեմբեր 2020 թ.
4	Միակ աղբյուր	4	130,6	դեկտեմբեր 2019 թ.
5	Բաց միափուլ մրցույթ	3	545,7	հունվար 2019 թ.
	Ընդամենը	**22**	**6 425,6**	



Նկար 3. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (քանակային)



Նկար 4. Գնման ընթացակարգի մասնաբաժինը ընդհանուր գնումների մեջ (գումարային)

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2018 թվականի գնումների պլանի մոնիթորինգի արդյունքները

Ընկերության գնումների պլանի մոնիթորինգի արդյունքներից կարելի է փաստել, որ.

1. գնումների պլանն ընկերության պաշտոնական կայքում և ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է 2018 թվականի փետրվարի 16-ին, ինչը չի բխում հանձնաժողովի Որոշում 2-ի պահանջներից,
2. ընկերությունը գնումների պլանը կազմել է պատշաճ մակարդակով:

Հղումներ

Որոշում 1. Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №540Լ որոշում,

Որոշում 2. Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների սահմանման ենթակա հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջներ սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №391Ա որոշում: